ՀԱՌ ՀԱՅԿԱՐԱՆ ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՆԵԱՆԻ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՋ

Աշխ. հոդվածագիր,

Ի՜նչ, մինչ հնա՞ր է լռել մի այսպիսի համազգային մեծ ծանր առթիւ, երբ ամբողջ Հայութիւնը իր բիբերէ յառած անձկութիւն, անոր խորքերէն դէպ ի վերա՝ կուլ իր զգայնութեան մեծ դիրկաստաններ։ Ինչ վանք դեր, զոր կատարեցին անոնք փրկելով Հայը մահուան ճիրաններէն, երբ իշխանական մականը պիտի փլուզէր ընդհանուր, երբ անկախութեան հակա պարիսպներ պիտի կործանէին։ Աւաղ, հայ ազէր պիտի տեսնէին տակաւ դրեթէն բոցերը՝ որ կ'սպառնային մոխիր դարձնելու Հայկական տունը։ Բայց ահա այդ կործանումներուն մէջ նոր վերաշինութիւն մը կ'պարարտանուի, ազգային վերածնունդ մը՝ գրականութեան մթնոցա։

Ու Հաց հպարտօրէն վեր կ'ամնու իր ճակատն և սրտին խորէն կ'օրհնէ զանոնք, որոնք պատերազմի դաշտին վրայ վիրաւորին պապակած շրթներուն ջուր տուողի մը պէս կենդանութեան անապատ աղբիւրէն կ'մատուցակեն անոր։ Հայը պիտի կորսուէր, ժամանակին հոսանքը պիտի վարէր զայն ինչպէս ծովամաւալ ամբոխ մարդերու, որոնք զուտնդանդ թաւալեցան կորստեան վիրը։ Ահա թէ ինչպէս հեղեղ մը ծածկեց անթիւ գլուխներ, մահը իր անչասակ սեղանները խորասուզեց ժողովուրդներ, աշխարհի չորս ծայրերուն մէջ մղուած ճակատամարտներ կուլ տուին չատ կեանքեր, ջնջուեցան մարդական երկար շարքեր և միայն ու միայն Աբրահամ սաղոյտ Հայ նահապետին սրտիններուն խնայելին պատերազմի մահաբեր գնդակներ։ Կ'հրնուի Հայաստանի պահպանն հրեշտակը, երբ կ'տեսնէ հարդրին կենդանի, իր արարին ու կարուածին գլուխը կանգուն, որուն քայլերուն տակ կ'ամէն լեռատա հասկաթուռ ցորեան ու գարին, իսկ գլխուն վերև քաղցրիկ յոյսեր կ'թռչկոտին։ Ատուծոյ բարի նայուածքին հանդիպած է ան և տխուր ճակատագրին հարուածներէն ազատ է։

Ո՞յք եղան, որ պարգեւեցին իրեն՝ այս երջանիկ վիճակը։—Ս. Սահակ և Ս. Մեսրո՛պ...։

Թոյլ տուէք ինձ, ազնիւ հայրենակիցներ, որ ներկայացնեմ ձեզ մի քանի բառերով անոնց սրբազան կեանքերը։

Ս. Սահակ, Ս. Գրիգոր Լուսաւորչի թոռնորդի, Ս. Ներսէսի որդի, Պարթեւաց ցեղի տանտերերդ և վերջին Հայապետ, ծնաւ Կ. Պոլիս, ուր ուսաւ և զարգացաւ և մնաց այնտեղ մինչև 35 տարի, իր հոր ազատական գործերով վառուած և մեծ բարձրագոյն միջոցներով, մասամբ Հայաստան և եղաւ հանգիստի իր վարքով և նախանձելի իր խանդով, հաւաքեց աշակերտներ և մեղց զանոնք ուսման կամով։

Ս. Սահակ անուանցաւ. Համազասպ իշխանի աղջկան հետ, որմէ ունեցաւ դուստր մը Սահանդոյշ, որ մեր պատմութիւն Վարդան Մամիկոնեանի մայրն էր։ Ս. Սահակ քահանայ ձեռնադրուեցաւ և իր կնոջ մահէն ետք 330 թուականին Ընդհանրական Կաթողիկոս օծուեցաւ. Ապրելիկ Կաթողիկոսին տեղ։ Նա վարեց իր Կաթողիկոսութիւնն իբր անմեղ քաղաքական գործիչ, վարժ ըլլալով սրէն Բիւզանդիոնի մէջ բարձր շրջանակներու հետ չփոխմամբ 35 տարիներ։ Բայց ինչ որ պիտի անմահացնէր զինք ու իր Դարը, իր զրկանութեան նուիրումն եղաւ։ Ինք եղաւ մասամբ և բարոյական կրթութեան յառաջ մղիչ ոյժը, ուսմանց և գիտութեանց ձեկնման հանդիսացաւ, իրեն մեծագոյն օժանդակ և ձեռնտու ունենալով անմահն Ս. Մեսրոպ։

Հիանալի չէ՞ արդեօք այն տեսիլը, երբ խոր խաւարի մէջ թաղուած վայր մը կ'ողողի յանկարծ լուսոյ պայծառութեամբ, երբ սրեւէ հորիզոնին եռեւէն վեր բարձրանալով կ'ոգեւորէ ամբողջ աշխարհն և կարծես կ'գոռայ այսպէս.—Լեր, ո՜վ մարդ, ահա հայաձեղի կոյր մթութիւնը, քուլէդ է լոյս աշխարհը։ Ս. Սահակի գործակցութիւնն և անոր Հայրապետական հովանաւորութիւնը մեծ սատար կ'ելլան գործոյն յաջողութեան, իր հրաւէրներն եղաւ, իր գլխաւոր պարծանքն Աստուածաշունչի թարգմանութիւնը, ինք յորմէնց թարգմանաբար Ձեռնադրութեանց կանոնը, չարադրեց աղօթքներ, իսկ իր բերդուն հանձարը կ'արտայայտի Աւագ Շաբթու քարոզներուն չարամանները։ բաց ի մէկ քանի՝ ներէ։ Ժամագրքի աղօթքներուն մէջ ինքն է գլխաւոր հեղինակ, իր մեծ ձեռնդէն է Պատարագամատոյցը։

Այս ամէն սրբանուէր երկերէն դուրս՝ հովուական պաշտօնին բերումով գրած է խրատ, յորդոր, կանոն՝ ազգին ամէն դասակարգերուն ուղղուած, որոնց ամէնուն մէջ նոյն խանդաղ, նոյն որդեսէր հայրն է որ իմաստներու գեղեցկութիւնը կը զուգորդէ լեզուի յստակութեան և վսեմութեան հետ, անոնց մէջ իր ճշմարտապէս և հարենասէր ոգին է որ կ'թրթռայ և կ'յաջողակէ մեր միացը։

Ժամանակին քաղաքական խռովութիւնները ընդմիջա յուզեցին մեր Սրբազան Հայրապետին արի ոգին, բայց ան կասաւեց անյողդողդ իր պարաքը։ Մի՛ հարցնէք զօրավարն թէ քանի՝ զոհեր տուաւ, քանիներ չկրցան տեսնել այն չքնաղ փառաւորումը, այնքան անդուլ հիւծեալ վերջ, բայց յաղթութիւնը չանուած է։ Ս. Սահակ գործեց արիաբար, փոթորիկներու մէջէն անցուց Հայութեան լաստափայտն և մեծագոյն բարիքն ընծայեց Ազգին,—Գրականութիւնը։ Ան ծառայեց մինչև այն վայրկեանը, երբ իր մաքուր հոգին սլացաւ յանմահութիւն և մարմինն ամփոփուեցաւ. Աշխիւսի լուս. գնարանը 5 Մեպտ. 439ին։—Իսկ ո՞վ է Ս Մեսրոպ։

Տարօն գաւառի Հաղեկաց գիւղին, Վարդանի մը որդի, ծնաւ 352—353 թուականին, դեռ փոքրիկ բաց ուսուցնեալեր ըլլալով չուսով զարգացաւ յունական լեզուի և դպրութեան մէջ, պան մը փոքրաւոր Ս. Ներսէսի, յետոյ մասաւորունիք իբր քարտուղար և դիւանապետ, մասամբ նաև գիտնականաց ասոյանանին մէջ և անոր մէջ յառաջադիմ հանդիսացաւ։ Բայց ան ընդհանուր թոռուց զէնքն ու պատմաւեան, հրամարեցաւ աշխարհային փառքերէ և կրօնական կեանքի զրաստեղով ծանեցաց իր մարմնոյ։ Իր թափանցող սուր միտքով նշմարեց թէ պէտք է կռուիլ ազգասիրեան դէմ. ուստի հաւաքեց իր քով լուսաւոր կամաւորներ —աշակերտներ, և ճակատ յարդարեց այն չարիքին դէմ. Տարօնէն անցաւ. Սիւնեաց աշխարհն և ասատուանանոյ գործ կատարեց իր քարոզութեամբ, բնակիչնի ընելով հեթանոսական սովորութիւններ և մեսպաստութիւններ և գերբաղանց օրինակ ընծայելով զինք ամէն առաքինութեանց։

Ո՜հ, երանելի վարդապետին ամբողջ էութեան մէջէն սոսրսուռ մը անցաւ. արդեօք երկնային ոգեի մը ազդարարութիւնն էր, որ թելադրեց անոր՝ ձեռք առնուլ ամէն զէնքերէ հատու, ամէն զէնքերէ գերազանց—գրիչ մը, և այդ գրիչով իջնել ասպարէզը մարտի։ Այն ատենն է որ հայ երկնքի երեսը ծածկեցին ասողներ պայծառ, հայ վարդապետին ծիծաղկոտ յոյսերն էին անոնք՝ որ հոլի՛ հոլի ծաղկցան խաւարին մէջէն։ Ս. Մեսրոպ հասկացաւ թէ իր քաջերուն առջև ահարկու Թուսմ մը կայ, մեծագոյն արգելք գիտութեան և զարգացման, որովհետև, աւա՛ղ, զուրկ էր այն ժամանակներուն մէջ ազգն իր ազգային բնիկ գիրերէն. ուստի նախ աղօթքով Աստուծոյ ապաւինեցաւ, անկէ գերբնական զօրութիւն մը զգեցաւ դիմեց Ս. Սահակայ 403 թուին. երկնային Հայրապետն ընդհանուր ազգին հոգերով ծանրաբեռն, յորդորեց զանի գործել և ուսումնասիր վեհապետի մը ձեռնասուութիւնն ստացաւ գործոյն յաջողութեան համար։

Թագաւորն ամէն նպաստ ներեց ատոր և իր և Ս. Սահակի յանձնարարական թղթերով՝ ուղարկեց զանի Մթլապետ, Դանիէլ Եպիսկոպոսի քով, բայց ընդհուպ տեսնուցաւ թէ անբաւական եղան Դանիէլեան նշանագիրներ. պատահեցան տժանելի ուղեւորութիւններ ընելու մեր Սուրբը մինչև ի Սամոսատ, որ երկնաւոր լուսով և հնարքով հարարարուեցաւ գտաւ իր ցանկային։ Առաջին այն տառերը կոչուեցան Մեսրոպեան և երկնագիր։ Այնուհետև. դարձաւ Հայաստան, ուրեմն իր մեծ յաղթանակին համար, ինչ մեծ երջանկութիւն մեր քնակարգին համար, երբ հրաւէր գիւանի պատմութիւն իսկայն մեր պատմիչները։ Թագաւորը, Կաթողիկոսը, իշխաններ և անթիւ ժողովուրդ վազեցին ընդառաջ երանելի Վարդապետին և սրտաբուխ հանդիպեցան Ռան գեղեցիկ մտերը։ Մանուկներ, օրիորդներ, բերկրածայն, դպիններ և վարդի պսակներ կ'սփռէին Սուրբին ոտքերուն առջև, սիրալիր համբոյրներով կ'ծածկէին անոր ձեռքերը. այն վայրկենին խզուեցան Ցոյն և Ասորի լեզուներու շղթաներ, և ամէն կողմ, տուներու և եկեղեցիներու մէջ կ'լսուէին հայերէն բարբառով երգ, օրհնութիւն, արքունի հրամանով, Հայաստանական կոնդակ, աղօթք։ Իր գործն է Մաշտոցը, Մխոսքան Հայ եկեղեցւոյ։ Իր սրբանէ խանդը կ'նշանեն իր յորենան Մեծ Պատոց չարամանները, իր հոգեւորական իղձերը կ'ցոլացնեն սրտայրդ աղօթքներ, ճառեր և խրատական նամակներ։ Իր մեծ ոգին ցոյց կուտան իր բացած դպրոցները գանուան։

Պատեալ մեր Հայրն ազատեցաւ երկար, ազգին նուիրուած կեանքը կոչեց վերջապէս 440ին, թեթեւցան ամէն ցաւերէ և հոգւով զարգացան՝ օրենքներ իրենցմէն և ամփոփուեցաւ. Ոչական գիւղը, որուն վրայ քաջասոտ՝ Վասակ Ամատունի փառատր տաճար մը կանգնեց։ Ահա թէ ինչո՞ւ կ'սիրենք այս գոյզ մը Հայրերը, ինչո՞ւ մեր սրտերը կապուած են անոնց յիշատակին հետ ոսկի շղթաներով. անոնք պարգեւեցին մեզի մեծագոյն բարիքը, մեր ազգային գոյութիւնը յաւերժացնող միջոցը։

Հաւատացէք, ազնիւ հայրենակիցնե՛ր, այն. ազգը, որուն ձեռքերէն վեր կ'բանէ գիտակցութիւնը՝ այն չի մնանիր ոչնոր անոր վրայ սեղան աղնաներ, մատռ. Տարուաներ, կասնիդ. քարը կ'ոչնամարտի բրիլի հարուածը, և ոսկիանման ալիքներ՝ որոնք բիւրեղի պէս կ'կանչեանեն մարդկային հզոր ձեռակերտներ, անոր են ընկուզանել իրենց խորքերուն մէջ այն լասրը, որ իր վրայ ազգի մը կեանքը կը կրէ։ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ընծայեցին մեզի Հայ գրականութիւնը, սրբազան լեզու մը, և երբ ժամանակ ժամանակ խուժադուժ ազգեր հեղեղի պէս ծածկեցին մեր սահմանները, Հայկական չուանը մաբերու սրեան ճաստաղիքներու մէջ, անանց անենատցան տակաւ, բայց Հայը մնաց կենդանի։

Ո՜վ երջանիկ Հայրեր, այս պահուս կը խնամարկեմ Ձեր Սուրբ յիշատակին առջև, յուզմունքի դողդոջուն և կ'գոչեմ. Ձեր Սուրբ հոգիները թող թեւածեն մեր դէպ ի բրոցներուն վրայ. դարձ՛ց, ահա այս է մեր միակ փրկութիւնը, անով է միայն մեր վերապարելումը, ուրիշ ոչ և է քաղաքական ծրագիր անոր է լաւագոյնին յոյսը ներշնչել մեզի, թող ազգասիրութիւնը իբր թանձր ծուխ չկուրցնէ մեր աչքերը, որպէս զի կարենանք տեսնել կորսվի նայուածքով Աւետեաց երկիրը։

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՆԵԱՆ